Հեղինակներ.
Բեքա Կվաճաձե
Իրակլի Փերաձե

Հեղինակային խումբ.
Գիորգի Ուգուլավա

Մեթոդիստ
Լելա Կակաշվիլի

Պատմություն

11

Մաս III

Աշակերտի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, 2023 թվականին:

 სულაკაურის
გამომცემლობა

Պատմություն 11, մաս III
Աշակերտի գիրք

Հեղինակներ՝ **Գիորգի Ուգուլավա, Բեքա Կվաճաձե, Իրակլի Փերաձե, Լելա Կակաշվիլի**
Խմբագիր՝ **Նինո Գոգոլաձե**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

Առաջին հրատարակություն, 2023
© Սուլակաուրիի հրատարակչություն, 2023
Նկարազարդումներ © Վառլամ Ջմուխաձե. էջ 103
Քարտեզագիր © Մուրման Մելքաձե
Բոլոր իրավունքները պաշտպանված են։

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-465-4

History 11 Part 3
Student's Book

© Sulakauri Publishing, 2023
All rights reserved.

Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

Թեմա

Միջնադար 6

Նպատակային հասկացություններ

- Ժամանակ
- Տարածություն
- Իշխանություն
- Աղբյուր
- Հասարակություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց

ԳԼՈՒԽ 1

Հռոմի գաղափարը միջնադարում և խաչակրաց պատերազմների դարաշրջանը 8

1-2. Ի՞նչ մարտահրավերների բախվեց Բյուզանդական կայսրությունը Մակեդոնական դինաստիայի կառավարումից հետո: 10

3-4. Ինչպե՞ս ձևավորվեց Արևելքում հզոր Թյուրք-սելջուկյան կայսրությունը: 24

5-6. Ինչպե՞ս վերածնվեց Հռոմի գաղափարը Արևմտյան Եվրոպայում Ֆրանկական կայսրության անկումից հետո: 38

7-8. Ինչո՞ւ հակադրվեցին հոգևոր և աշխարհիկ իշխանությունները XI-XII դարերում: 55

9-10. Ինչո՞ւ սկսվեցին խաչակրաց պատերազմները: 70

11-12. Ինչպե՞ս փոխեցին առաջին խաչակրաց արշավանքները Եվրոպան և Արևելքը: 88

13-14. Ի՞նչ կարևոր իրադարձություններով է բնութագրվում խաչակիրների դարաշրջանը: 105

15-16. Ո՞ր գործոններն են նպաստել Եվրոպայում քաղաքների առանձնահատուկ զարգացմանը: 126

Նպատակային հասկացություններ

- Տարածություն
- Հասարակություն
- Ժամանակ
- Իշխանություն
- Հասարակություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց

ԳԼՈՒԽ 2

Եվրոպան և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում 152

17-18. Ինչպե՞ս փոխեցին մոնղոլական նվաճումները Արևելյան աշխարհը: 154

19-20. Ինչպե՞ս առաջացավ Օսմանյան պետությունը: 174

21-22. Ինչպե՞ս փոխվեց XIII-XIV դարերի Եվրոպան: 189

23-24. Ինչպե՞ս փորձեց Լենկ Թեմուրը ստեղծել Միասնական Մոնղոլական կայսրություն: 207

Թեմա

Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ 228

Նպատակային հասկացություններ

- Հասարակություն
- Տարածություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Հասարակություն
- Աղբյուր
- Ժամանակ

ԳԼՈՒԽ 3

Միջնադարից մինչև Նոր ժամանակ (XV-XVI) 230

25-26. Ինչպե՞ս կործանվեց Բյուզանդական կայսրությունը օսմանյան թուրքերի կողմից: 232

27-28. Ինչպե՞ս հումանիզմի և Վերածննդի դարաշրջանը փոխեցին եվրոպական աշխարհը: 248

29-30-31. Ինչպե՞ս և ինչո՞ւ սկսվեցին Աշխարհագրական մեծ հայտնագործությունները: 265

32-33. Ինչո՞ւ Եվրոպայում սկսվեց բողոքական Ռեֆորմացիան: 291

34-35. Ի՞նչ կարևոր իրադարձություններով էր բնութագրվում XVI դարը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: 310

Նպատակային հասկացություններ

- Իշխանություն
- Հասարակություն
- Տարածություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Աղբյուր

ԳԼՈՒԽ 4

Աբսոլյուտիզմի դարաշրջանը Եվրոպայում և Արևելքում 340

36. Ինչպե՞ս ազդեց Հոլանդիայի հեղափոխությունը եվրոպական միապետությունների վրա: 342

37-38. Ինչո՞ւ սկսվեց Երեսնամյա պատերազմը (1618–1648) Եվրոպայում: 351

39. Ինչո՞ւ Անգլիայում թագավորի ու պառլամենտի միջև սկսվեց քաղաքացիական պատերազմ: 370

40. Ինչպե՞ս ձևավորվեց բացարձակ միապետությունը Ֆրանսիայում: 384

41. Ինչպե՞ս հզորացավ Սեֆյանների դինաստիան Իրանում: 403

42. Ինչպե՞ս Պետրոս I-ը վերափոխեց հին Ռուսաստանը եվրոպական պետության: 412

Թեմա

Երկարատև XIX դարը 428

Նպատակային հասկացություններ

- Իշխանություն
- Հասարակություն
- Տարածություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Ժամանակ

ԳԼՈՒԽ 5

Աշխարհը հեղափոխությունների և մեծ փոփոխությունների դարաշրջանում 430

43-44. Ինչպե՞ս փոխեցին լուսավորիչները Արևմտյան աշխարհը: 432

45-46. Ինչպե՞ս ստեղծվեց Ամերիկայի Միացյալ Նահանգները: 447

47-48. Ինչպե՞ս հեղափոխությունը փոխեց Ֆրանսիան: 467

49-50-51. Ինչպե՞ս փոխեց Նապոլեոնը Եվրոպայի պատմությունը: 489

Նպատակային հասկացություններ

- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Տարածություն
- Հասարակություն

ԳԼՈՒԽ 6

Եվրոպան Վիեննայի կոնգրեսի և բրիտանական խաղաղության ժամանակաշրջանում 526

52-53. Ինչպե՞ս արդյունաբերական հեղափոխությունը փոխեց աշխարհը: 528

54-55. Ինչո՞ւ է XIX դարը համարվում Բրիտանական կայսրության փառքի ժամանակաշրջան: 543

56-57. Ինչպե՞ս Ռուսաստանը դարձավ Արևելքի ամենակարևոր քաղաքական ուժը: 557

58-59. Ինչպե՞ս փոխեցին 1848 թվականը և Ղրիմի պատերազմը եվրոպական իրականությունը: 573

Նպատակային հասկացություններ

- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Հասարակություն
- Տարածություն
- Աղբյուր
- Իշխանություն

ԳԼՈՒԽ 7

Գլոբալ փոփոխությունների դարաշրջանը 594

60-61. Ինչո՞ւ ռոմանտիկ ազգայնականությունը հանգեցրեց միասնական Իտալիայի ստեղծման: 596

62-63-64. Ինչո՞ւ սկսվեց քաղաքացիական պատերազմը Ամերիկայում: 610

65-66. Ինչպե՞ս են զարգացել Ճապոնիան և Չինաստանը XIX դարում: 631

67-68. Ինչպե՞ս փոխեց Գերմանիայի միավորումը Եվրոպան: 648

Թեմա I

Երկարատև XIX դարը

ԳԼՈՒԽ 5 Աշխարհը հեղափոխությունների և մեծ փոփոխությունների դարաշրջանում 430

ԳԼՈՒԽ 6 Եվրոպան Վիեննայի կոնգրեսի և բրիտանական խաղաղության ժամանակաշրջանում 526

ԳԼՈՒԽ 7 Գլոբալ փոփոխությունների դարաշրջանը 594

Նապոլեոն Բոնապարտի թագադրումը

ԳԼՈՒԽ

5

Համաշխարհային հեղափոխությունների և մեծ փոփոխությունների դարաշրջանում

Մո՛ւտք գործիր պատմություն, իմացի՛ր ավելին Ֆրանսիական հեղափոխության մասին:

XVIII դարից Եվրոպայում և Ամերիկայում սկսվեցին մեծ փոփոխություններ, որոնք արմատապես վերափոխեցին ողջ աշխարհը: Փոփոխություններն առաջին հերթին տեղի են ունեցել հասարակական մակարդակում, քաղաքական մտածողության մեջ, երբ լուսավորականների անունով հայտնի մտածողներ, գործիչներ և փիլիսոփաներ քարոզչություն են ծավալել ընդդեմ ինքնիշխանության, աբսոլյուտիզմի և սկսել են պայքարել հանուն մարդու իրավունքների, ազատության և հավասարության: Այս միտումը ի հայտ է եկել Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը Բրիտանիայի դեմ պայքարն ավարտել է անկախությամբ և հանրապետության ստեղծմամբ, և Ֆրանսիայում, որտեղ հեղափոխության արդյունքում միապետությունը փոխարինվել է հանրապետությամբ: Հետո արդեն կայսր Նապոլեոնը հանրապետությունը վերածել է ինքնիշխան կայսրության, սակայն պահպանել է հեղափոխական Ֆրանսիայի արժեքները և դրանք տարածել ողջ Եվրոպայում:

Այս գլխում կիմանաս, թե ինչպես են լուսավորականները փոխել իրենց դարաշրջանի հասարակությունը, ինչպես է Ամերիկան ձեռք բերել անկախություն, և ինչն է ձևավորել Ամերիկայում ինքնակառավարման մշակույթը, ինչո՞ւ է սկսվել Ֆրանսիական հեղափոխությունը, ինչպե՞ս և ինչո՞ւ է Նապոլեոնը նվաճել այն ժամանակվա Եվրոպայի մեծ մասը:

Նապոլեոնը անցնում է Ալպերը, Ժակ-Լուի Դավիդի (1748-1825) կտավը



Հանգուցային իրադարձություններ

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5

Հոդված կառավարման ձևերի մասին

Պատկերացրո՛ւ, որ դու գիտաշխատող ես և պետք է գիտական ամսագրի համար հոդված գրես XVII-XVIII դարերի արևմտյան աշխարհի կառավարման ձևերի մասին:

Հոդվածում հստակ ցո՛ւյց տուր.

- Ինչպես էր ընթանում իշխանության համար պայքարը Արևմտյան աշխարհում (Եվրոպա, Ամերիկա). որոնք էին կառավարման համակարգերի մասին հիմնական գաղափարները, ինչպես էր բաշխվում իշխանությունը, ինչ միջոցներով էին պահպանում այն: *(Իշխանություն, Ուս.գ. 1, 2, 3)*
- Ինչպես փոխվեց կառավարման մոդելը հեղափոխություններից հետո Ամերիկայում և Ֆրանսիայում: Ինչպես էր բաշխվում իշխանությունը: *(Իշխանություն, Ուս.գ. 2, 3, 4, 5)*
- Ինչպես է փոխվել հեղափոխությունների արդյունքում հասարակությունը Ֆրանսիայում և Ամերիկայում, ինչ խմբերի է այն բաժանվել, ինչ քաղաքական դիրքորոշում ուներ, որոնք էին այդ խմբերի շահերը և ինքնության միջոցները: *(Հասարակություն Ուս.գ 1, 2)*
- Ինչպես փոխեց Նապոլեոնը կառավարման մոդելը և ֆրանսիական/եվրոպական հասարակությունը: Որն էր հակամարտության հիմնական պատճառը Նապոլեոնի և եվրոպական միապետությունների միջև: *(Իշխանություն, Ուս.գ.1, 2 3, 4, հասարակություն մ. 3)*
- Ինչու են ֆրանսիական և ամերիկյան հեղափոխությունները համարվում նրանց պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբ: *(Ժամանակ, Ուս.գ. 1, 2, 3)*


LE
IOVRNAL
DES
SCAVANS
Par le Sieur DE HEDOVVILLE
A PARIS.
M. DC. LXV.

Եվրոպայում տպագրված առաջին ակադեմիական ամսագրերից մեկը

Հասկացություն

- Իշխանություն
- Հասարակություն

Մշակվում է Աշակերտի տետրում

43-44. Ինչպե՞ս փոխեցին լուսավորականները Արևմտյան աշխարհը:

- **Հասկացություն.**
  իշխանություն, հասարակություն

- **Հանգուցային հարց.**
  Ինչպե՞ս փոխեցին լուսավորականների գործունեությունն ու գաղափարները պետական կառավարման մասին գոյություն ունեցած պատկերացումները:

- **Ծանոթագրություն.**
  XVIII դարը Եվրոպայում մեծ փոփոխությունների շրջան է: Այս շրջանում տիրապետող մենիշխանությանը, միապետական համակարգին և կրոնական անհանդուրժողականությանը հակադրվում էին նոր գաղափարներն ու հայացքները: Արևմտյան մտածողները, առաջին հերթին Ֆրանսիայում և Անգլիայում, սկսում են մտածել, թե ինչպես պետք է փոխվի Եվրոպայի քաղաքական մշակույթը և հասարակությունը: Այս մտածողները կոչվում էին լուսավորականներ, իսկ այս գործընթացը պատմության մեջ մտել է լուսավորություն կամ լուսավորականություն անունով:
  Այս գլխում կիմանաս, թե լուսավորությունն ինչպես ստեղծեց ժամանակակից արևմտյան քաղաքակրթության հիմքը, թե ինչպես փոխակերպեցին լուսավորականները քաղաքական մշակույթը, և ինչպես էին տարածվում նրանց գաղափարներն այն ժամանակվա հասարակության մեջ:

«Մարդ ծնվում է ազատության համար, և ամենուրեք Երկրի վրա նա ստրկացված է»:

Ժան-Ժակ Ռուսո, ֆրանսիացի փիլիսոփա, լուսավորական, XVIII դ.

Ինչո՞ւ է լուսավորությունը կարևոր արդիականության համար:

Մինչև XVII-XVIII դարերը Եվրոպան քաղաքական և սոցիալական մակարդակում գրեթե ծանոթ չէր այն կարևորագույն գաղափարներին ու սկզբունքներին, որոնք դնում են ժամանակակից արևմտյան քաղաքակրթության հիմքը: Պետության մեջ քաղաքական և կրոնական իշխանության տարանջատումը, հավասարությունը, անձնական ազատությունը, իշխանության բաժանումը, մարդու իրավունքները, հանդուրժողականությունը՝ Եվրոպայում քաղաքական գործընթացներում մինչ այս դարաշրջանը նման գաղափարները առաջատար չեն եղել:

XVII դարի երկրորդ կեսից սկսվում է ժամանակաշրջան, որը ստեղծում է այն հիմնական գաղափարներն ու սկզբունքները, որոնց վրա մինչև օրս հիմնվում է ժամանակակից Արևմտյան աշխարհը: Այս գաղափարները, կարծիքներն ու իդեալներն սկզբից ի հայտ են եկել փիլիսոփայության, քաղաքական ուսմունքների, գրականության և մշակույթի մեջ: Դրանց հեղինակներն էին մտածողներ, փիլիսոփաներ, արվեստագետներ և գրողներ, որոնք կոչվում էին **լուսավորականներ**: Այս դարաշրջանը հիշատակվում է որպես լուսավորության դարաշրջան:

Աղբյուր 1

Հատված Իմանուել Կանտի «Պատասխան հարցին, թե ի՞նչ է լուսավորությունը» հոդվածից (2011)

«Կանտի համար հիմնական հայեցակարգային հասկացությունը «չափահասությունն» է, որի չափանիշը բանականությունն է: Ըստ Կանտի՝ նախորդ դարաշրջաններում մարդկությունը լիովին չի բացահայտել իր բանական դատողականությունը, եղել է «անչափահաս»: Ինքը՝ մարդն է մեղավոր իր «անչափահասության» համար, նա չի ունեցել սեփական բանականությունից ինքնուրույնաբար օգտվելու բավարար արիություն՝ Sapere Aude! – սա է լուսավորության կարգախոսը»:

Սա հետաքրքիր է

Որտեղի՞ց է առաջացել «Լուսավորություն» տերմինը:

Լուսավորություն տերմինը համեմատաբար ուշ շրջանի է: Անգլերեն տերմինը՝ «Enlightenment» հայտնվել է միայն XIX դարում: Մինչ այդ գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտը այս տերմինը 1784 թվականին օգտագործում է գերմաներեն՝ Aufklärung: Նմանատիպ նշանակություն ուներ ֆրանսերեն Lumière տերմինը, որն օգտագործվել է դեռևս 1733 թվականին: Այս բոլոր տերմինները մոտավորապես նման նշանակություն ունեն:

ՆԵՐԴԻՐ

Ե՞րբ է սկսվել և ավարտվել լուսավորականների դարաշրջանը:

Որոշ հետազոտողներ լուսավորության դարաշրջանը սկսում են ֆրանսիացի գիտնական և փիլիսոփա Ռենե Դեկարտի բանաձևով՝ «Ես մտածում եմ, հետևաբար ես գոյություն ունեմ», որը թվագրվում է դեռևս 1637 թվականով: Մյուսները՝ անգլիացի ֆիզիկոս Իսահակ Նյուտոնի «Մաթեմատիկայի սկզբունքների» (Principia Mathematica) հրատարակությամբ (1687): Ամենատարածված կարծիքի համաձայն՝ լուսավորականների դարաշրջանը սկսվում է 1715 թվականին Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի մահով, և ավարտվում է XVIII դարի վերջին (1789) Ֆրանսիական հեղափոխությամբ: Առավելապես հենց այս դարաշրջանն են անվանում լուսավորականների դար:

Ինչպես արդեն գիտես նախորդ պարագրաֆներից, այս շրջանը Եվրոպայում դարերի ընթացքում ամրապնդված բացարձակ միապետությունների դարաշրջանն էր, երբ բացարձակ իշխանությունը գտնվում էր թագավորի և իշխող սոցիալական դասի՝ փոքրամասնության ձեռքում: Այս դարաշրջանին բնորոշ էր կրոնական անհանդուրժողականությունը և դասային համակարգը: Լուսավորականները, որոնք ներկայացնում էին երրորդ սոցիալական դասի՝ բնակչության մեծամասնության շահերը, հակադրվում էին այս համակարգին: Այս պայքարը շարունակվել է տասնամյակների ընթացքում, և հենց նրանց միջոցով են ստեղծվել այն հիմնական ձեռքբերումներն ու արժեքները (հավասարություն, ազատություն, իշխանության տարանջատում, մարդու իրավունքներ և այլն), որոնց Արևմտյան քաղաքակիրթ աշխարհը հիմնվում է մինչև օրս:

Աղբյուր 2

Միլան Զաֆիրովսկի՝ գիտնական, Տեխասի համալսարան, «Լուսավորությունը և նրա ազդեցությունը ժամանակակից հասարակության վրա» գրքի հեղինակ (2011)

«Լուսավորությունը շարունակում և ընդարձակում է Վերածնունդը, որը դադարեցրել էր բողոքական Ռեֆորմացիան իր խիստ, արվեստի դեմ ուղղված կալվինիզմով և նույնիսկ ավելի կոպիտ ու հումանիզմի հակառակորդ մաքակրոնությամբ Անգլիայում և Ամերիկայում»:

Առաջադրանք

1 Հիշի՛ր

Հիշի՛ր նախորդ պատմական դարաշրջանները և դատողությո՛ւն արա, թե որ ժամանակահատվածների փորձառության հետ էին կապվում լուսավորականների գաղափարները և արժեքները:

2 Դատողությո՛ւն արա

Որքանո՞վ է հիմնվում ժամանակակից Արևմտյան քաղաքակրթությունը լուսավորականների կողմից ձևավորված հիմքերին:

3 Հիշի՛ր

Հիշի՛ր նախորդ նյութը և դատողությո՛ւն արա նախորդ դարաշրջանների եվրոպական հասարակության ինքնության մասին, ի՞նչ հետաքրքրություններ, համոզմունքներ և արժեքներ ունեին նրանք: Ինչպե՞ս էր կազմակերպված նրանց քաղաքական ու հասարակական կյանքը:

Ինչո՞ւ նպաստեց գիտական հեղափոխությունը լուսավորությանը:

Լուսավորականները քարոզում էին ռացիոնալիզմ, այսինքն՝ տիեզերքի ճանաչում և ընկալում տրամաբանական ճանապարհով, վերլուծությամբ, բանականությամբ, գիտական եղանակով: Այս առումով նրանք հակադրվում էին հավատքին և դոգմաների վրա հիմնված կրոնին, որն այդ ժամանակահատվածի Եվրոպայում վերահսկում էր հասարակության և պետության կյանքի գրեթե ամեն նրբություն:

Լուսավորականները նպաստում էին կրթության և գիտության զարգացմանը: Իրենք նույնպես մշակույթի, գիտության և կրթության վերնախավերն էին հանդիսանում: Նրանց գաղափարների տարածման վրա մեծ ազդեցություն է ունեցել գիտական հեղափոխությունը, որը սկսվել է XVII դարում:

Այս շրջանի գիտնականներից աչքի էր ընկնում Իսահակ Նյուտոնը, որի հայտնագործությունները ֆիզիկայի և մաթեմատիկայի մեջ տրամագծորեն փոխեցին աշխարհի՝ մինչ այդ գոյություն ունեցած ընկալումը:

ՆԵՐԴԻՐ

Ինչպե՞ս է զարգացել գիտությունը Կոպեռնիկոսից մինչև Նյուտոն

Գիտական հեղափոխության սկզբի ամսաթիվ են դարձել դեռ 1543 թվականը և Նիկոլայ Կոպեռնիկոսի գիտական հայտնագործությունները: Կոպեռնիկոսն ապացուցեց, որ տիեզերքը արևակենտրոն է, ոչ թե երկրակենտրոն, ինչը նշանակում է, որ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը, և Արեգակը գտնվում է տիեզերքի կենտրոնում, ոչ թե հակառակը՝ Արեգակն է պտտվում Երկրի շուրջը: Նման տեսակետներ ունեցել են նաև ավելի վաղ ժամանակների մտավորականները, բայց այս վեճին վերջ է դրել Կոպեռնիկոսը: Կոպեռնիկոսի հետազոտությունը շարունակել է իտալացի գիտնական





Իսահակ Նյուտոնը (1643-1727) և նրա գրառումները

1

Գալիլեո Գալիլեյը, ով ստեղծել է ջերմաղիտակներ՝ ջերմաստիճանը չափելու գործիքներ, կողմնացույցներ և զարգացած աստղադիտակներ, որոնց միջոցով նա ավելի լավ էր հետազոտում տարբեր մոլորակներ: Գալիլեյն ուսումնասիրել է լուսնի մակերևույթը և հաստատել Կոպեռնիկոսի հետազոտությունները, որ մի կողմից՝ Երկիրն իր առանցքի շուրջն է պտտվում, իսկ մյուս կողմից՝ այն պտտվում է Արեգակի շուրջ:
XVII դարի վերջին Իսահակ Նյուտոնի հետազոտությունները ևս մեկ բեկում են եղել ֆիզիկայում, մաթեմատիկայում և աստղագիտության մեջ: Նյուտոնը ձևակերպել է շարժման և ձգողականության օրենքները և հիմք դրել դասական մեխանիկային:

Սա հետաքրքիր է

Գալիլեոն ընդդեմ Պապի

Կաթոլիկ եկեղեցին թերահավատորեն էր մոտենում գիտական նորություններին: Եկեղեցին կանգնած էր ավանդույթների և ամուր, դարերի ընթացքում գոյություն ունեցող գաղափարների վրա: Եկեղեցական պատկերացումները միայն կրոնով և մարդու հոգևոր կյանքով չէին սահմանափակվում, այլ սահմանում էին հասարակության կյանքի բոլոր կողմերը:
Նոր գիտական հետազոտություններն ու հայտնագործությունները հաճախ անտեսում էին այդ պատկերացումները, ինչը կոնֆլիկտի պատճառ էր դառնում գիտնականների և եկեղեցու միջև: Նման կոնֆլիկտ է զարգացել Գալիլեո Գալիլեյի և Հռոմի պապի միջև: Եկեղեցին չէր ճանաչում, որ տիեզերքի կենտրոնը ոչ թե Երկիրն է, այլ Արեգակը: Գալիլեյը դատապարտվել է ցմահ տնային կալանքի և արգելվել է նրա աշխատությունների հրապարակումը:
Գալիլեյի աշխատությունները տպագրելու իրավունք եկեղեցին տվել է XVIII դարում և համաձայնել է նրա հետազոտությունների արդյունքների հետ: Արևակենտրոնությունը կաթոլիկ եկեղեցու կողմից ճանաչվել է 1835 թվականին, իսկ 1939 թվականին Պիոս XII պապը Գալիլեո Գալիլեյին անվանել է «հետազոտության ամենահամարձակ հերոսներից մեկը»:

Առաջադրանք

4 Դատողությո՛ւն արա

Ինչո՞ւ էր եկեղեցին թերահավատորեն ընկալում գիտական հայտնագործությունները:

5 Դատողությո՛ւն արա

Ինչո՞ւ էին գիտությունն ու եկեղեցին տիեզերքն ընկալում տարբեր կերպ: